ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արսեն Հայկի Աղաջանյան

Ծնվել է 1970 թ. հուլիսի 17-ին Չարենցավան քաղաքում:

1988-1990 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1991-2007 թթ. զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում:

2007 թ.-ին դուրս է եկել ձեռնարկությունների ակտիվ կառավարումից և մշտական բնակության է տեղափոխվել Կիպրոսի Հանրապետություն, որտեղ "ADA Capital" ներդրումային ընկերության միջոցով ներդրումներ է իրականացրել տարբեր երկրներում և ոլորտներում:

2019 թ. սեպտեմբեր ամսին վերադարձել է Հայաստան:

2007 թ.- մինչ օրս «ԴԱՐ» տարածաշրջանային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի Նախագահն է, որի միջոցով իրականացվել են Աղաջանյան ընտանիքի սոցիալական նախագծերը, ինչպես նաև օժանդակություն է տրամադրվել Հայաստանի զարգացման համար կարևոր կրթական, մշակութային և այլ ծրագրերի իրականացմանը:

«ԴԱՐ» հիմնադրամի միջոցով տարիներ շարունակ օժանդակություն է տրամադրել Ծաղկունքի բաց դպրոց հիմնադրամին՝ համայնքում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման նպատակով (2012-2017 թթ):

Կիպրոսում 2014 թ.-ից ի վեր գործող «Արարատ» ֆուտբոլի ակումբի համահիմնադիրն է:

Կիպրոսի՝ 2014 թ.-ին հիմնադրված «Ռուսալեգու Ֆուտբոլային Լիգայի» գլխավոր հովանավորն է:

Բազմաթիվ անգամներ օժանդակություն է տրամադրել Հայաստանի ազգային հավաքականի արտագնա խաղերի ժամանակ հայ երկրպագուների համար ընդունելությունների կազմակերպմանը:

Ամուսնացած է, ունի 4 երեխա: